



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Ա. Մինասյան

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«31» 03 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 33

Ձեռնարկողը՝

<<Լիլի-Արման>> ՍՊԸ

Գործունեությունը՝

Արագի ավազի հանքավայրի I, II, III փեղամասերի
արդյունահանման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն
<< Արմավիրի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Վ. Սահակյան

Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 33

«31» 03 2017թ.

<<Լիլի-Արման>> ՍՊԸ կողմից ներկայացված << Արմավիրի մարզի Արագի ավազի հանքավայրի I, II, III տեղամասերի արդյունահանման գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝	<<Լիլի-Արման>> ՍՊԸ
Նախագծող՝	<<Լիլի-Արման>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ.
Տեղադրման վայրը՝	ՀՀ Արմավիրի մարզ
Գործունեության կատեգորիան	/Ա/ կատեգորիա

Արագի ավազի հանքավայրը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Արաքս գյուղից 2.5կմ դեպի հարավ, Արաքս գետի ձախ ափին: Այն տեղակայված է ՀՀ պետական սահմանի հարևանությամբ, բաղկացած է 3 տեղամասերից և զբաղեցնում է մոտ 7.6 հա տարածք /1-ին տեղամաս-2.6հա, 2-րդ տեղամաս-2.7հա, 3-րդ տեղամաս-2.3հա/: Հանքավայրի նշված տեղամասերը գտնվում են Արաքս գյուղից համապատասխանաբար 2.8կմ դեպի հարավ-արևելք, 1.8կմ դեպի հարավ և 1.4կմ հարավ-արևմուտք: Մասիս-Երևան ավտոճանապարհից հետ հանքավայրը կապված է գրունտային 3.0կմ և ասֆալտապատ 12կմ ճանապարհներով:

ՀՀ Արմավիրի մարզի Արագի ավազի հանքավայրի I, II, III տեղամասերի շահագործման աշխատանքային նախագիծը կազմվել է 2005թ «Լիլի-Արման» ՍՊԸ-ի տեխնիկական առաջադրանքի և ՀԱ-Լ-14/366 հանքարդյունահանման լիցենզիայի հիման վրա: 2017թ-ին լրանում է հանքավայրի շահագործման ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը: Ընկերությունը համաձայն Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի հոդված 55-ի պահանջի, ցանկանում է կատարել իրավունքի ժամկետի երկարաձգում 50 տարով, որի համար կատարում է նախագծում համապատասխան փոփոխություն:

Հաշվի առնելով այն, որ հանքավայրի պաշարները դինամիկ վերականգնվող են, նախագծում փոփխված է միայն ծառայման ժամկետը: Նախագծային ոչ մի լուծում կապված արտադրողականության, տեխնոլոգիայի և այլնի հետ չեն փոփոխվել, ինչպես նաև չի

Արաքս 56 է օրինակ, Մարտի



կատարվելու նոր կառուցում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում:

ՀՀ Արմավիրի մարզի Արագիի ավազի հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ ՕՀՊԳ-ի կողմից 2005թ. մայիսի 24-ի N 67 որոշմամբ և հանքավայրի հաշվեկշռային ստատիկ պաշարները C₁ կարգի համար կազմում են 294.6 հազ.մ³: Հանքավայրի պաշարները դինամիկ վերականգնվող են: Ավազի ելքը կազմում է 92.0%, կոպիճինը 8.0%:

Սույն նախագծով նախատեսվում է.

- հանքարդյունահանման աշխատանքները կատարել սեզոնային ռեժիմով.
- հանքավայրի 3 տեղամասերը շահագործել զուգահեռ.
- հանքարդյունահանման աշխատանքները կատարել Արաքս գետի հոսքի հակառակ ուղղությամբ.
- հանույթաբարձման աշխատանքները կատարել ՅՕ-5111EXL մակնիշի դրագլայնով.

Բացահանքերի ամեն մի տեղամասում մարվող պաշարների քանակը ընդունված է 10000մ³/տարի:

Բացահանքերից տարեկան արդյունահանվող պաշարները կազմում են I տեղամաս-9020մ³, II տեղամաս-8890մ³, III տեղամաս-8890մ³, ընդամենը - 26800մ³:

Նախատեսվող գործունեության վնասակար բացասական ազդեցությունները նվազեցնելու կամ մեղմելու նպատակով, ըստ նախագծային փաստաթղթերի, նախատեսվում է մի շարք միջոցառումներ:

Հանքարդյունահանման աշխատանքների ժամանակ բացահանքերի սահմաններից դուրս ավտոճանապարհներից տեղի է ունենում փոշեառաջացում, ռելիեֆի ժամանակավոր փոփոխություն և բացահանքի մշակված տարածությունում ջրերի կուտակում:

- Փոշենստեցման նպատակով բացահանքի սահմաններից դուրս ավտոճանապարհների ջրում տարվա շոգ և չոր եղանակներին:

- Բացահանքերի մշակված տարածությունում կուտակված ջրերը ջրհեռացնող խրամների մեջ լցված գետաքարերի միջով մաքրելը և հետո նոր հեռացնել Արաքս գետ: Ջրհեռացնող խրամների մեջ կուտակված տիղմը օգտագործվելու է շրջակա տարածքի կանաչապատման համար, որպես պոտենցիալ բուսահող:

- Հանքարդյունահանման աշխատանքների ուղղությունը պետք է կատարել Արաքս գետի հոսքին հակառակ ուղղությամբ:

- Ամեն տարի սեզոնի սկզբում արդյունահանման աշխատանքների ճիշտ կազմակերպում: Վարարաջրերի ժամանակ մշակված տարածությունը օգտակար



նստվածքներով լցվելու պատճառով նոր անցկացվող կտրող խրամի հատակի եզրը պետք է համընկնի նախորդ տարվա վերջին ընթացքաշերտի կողի ներքին եզրի հետ:

- Միստեմատիկ (սեզոնի սկզբում և վերջում) պետք է կատարել մարկշեյդերական դիտարկումներ վարարաջրերի ժամանակ մշակված տարածության լցվող օգտակար նստվածքաշերտի պաշարները (դինամիկ պաշարները) քանակապես և որակապես հաշվելու և հսկելու համար:

Սույն նախագծով մշակված տարածության վերակուլտիվացիա չի նախատեսվում, քանի որ այն ամեն տարի վերակուլտիվացվում է գարնան վարարաջրերի ժամանակ:

Եզրահանգում «Լիլի-Արման» ՄՊԸ կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արագի ավազի հանքավայրի I, II, III տեղամասերի շահագործման նախագծով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախագծային փաստաթղթերը, փորձաքննական գործընթացում առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կատարված լրամշակումները, ինչպես նաև Արաքս համայնքում տեղի ունեցած երկու հանրային քննարկումների արդյունքները, որով համայնքը տվել է իր դրական կարծիքը նախատեսվող գործունեության իրականացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Լիլի-Արման» ՄՊԸ կողմից ներկայացված ՀՀ Արմավիրի մարզի Արագի ավազի հանքավայրի I, II, III տեղամասերի արդյունահանման գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ՝



Ա.Մինասյան